

2

1262

ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻՆ  
ԳԻՐԲԸ


1209

Հայկ. Գրադարան  
Գրքերի Գրադարան



5 Ե Դ

## ՀԻՆ ՀԱՅ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ



Աղբամարի տաճարին արեւմտեան ճակատէն զարդաքանդակ մը

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

(Պատասխաններ տեսնել էջ 39)

- 1.— Ո՞վ է եղիպսացի ժամանակակից ամենամեծ նկարիչը:
- 2.— Նկարիչ Մատթիոս Սարեան Վերջերս նոր պատճօնի մը կոչուեցաւ. ո՞րն է այդ պատճօնը:
- 3.— 1783 բուականը ի՞նչ կը ներկայացնէ Միացեալ Նահանգներու պատմութեան մէջ:
- 4.— Ո՞վ ճնաւեց Ֆրանկալսի դէմ թիւ 606 հռչակաւոր պատճառութիւնը:
- 5.— Ո՞վ է Լուս Քոմբը:
- 6.— Ի՞նչ կը կոչուի Նորվեկիոյ մայրաքաղաքը:
- 7.— Ո՞վ էր Միսաք Մանուշեան:
- 8.— Երեւան ո՞վ փութարկեց Խորհրդային Միութեան Գերագոյն Սովիէթի քննութիւններուն:
- 9.— Ո՞վ է Գրիգոր Յարութիւնեան:
- 10.— Թուել Էւրոպայի պետական մեծ անձնաւորութեան մը եւ Ֆրանսացի բօքսէօսի մը անունները, որոնք բուռն կերպով պատասխանեցին հայ դատը, մեզի ժամանակակից օրերուն:
- 11.— Հայկական Ս. Ս. Հ. Գիտութիւններու Ակադեմիայի նախագահութիւնը Բանի՞ անձնաւորութիւններէ կը բաղկանայ եւ ո՞վ է այդ նախագահութեան նախագահը:



## ԹՈՒՐԿԻՈՅ ԿՈՂՄԷ ԽԼՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐՈՒ ԿՅՈՒՄԸ

Գրեց՝ ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ասորեւ կու ճանց կարգ մը հասուածներ Հ. Կ. (Բ.) Պ. ի Կեցկոմի Ընդհանուր Քարտուղար՝ Գրիգոր Յարութիւնեանի ընտրութիւնէնու առիւ խեւած կարելու հառեց.—

Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններ ժողովրդական կոմիտայնրի Խորհուրդը արտօնութիւն տուեց Հայաստանի Կառավարութեան, Հայրենիքի դռները բանալ արտասահմանում գտնուող հայերին եւ դիւրացնել նրանց ներգաղթի գործերը։ Այս պատմական որոշումը մեծ նշանակութիւն ունի Հայաստանի եւ արտասահմանի հայութեան ներկայի եւ ապագայի նկատմամբ։ Այս ձեռով հնարաւորութիւն կը տրուի բոլոր հայերին համախմբուել Հայրենիք եւ լծուել նրա վերելքի եւ յառաջգիւնութեան նուիրական աշխատանքին։

Այս որոշումը երախտագիտութեան զգացումներով լեցնում է մեր սրտերը Ռուս մեծ ժողովրդի եւ իրաւադրկուածների պաշտպան Սպարապետ Ստալինի հանդէպ՝ որի անվերապան եւ ջերմ համակրանքը Հայերի նկատմամբ լուազոյն երաշխիքն է մեր ազգային ցանկութիւնների իրականացման։

Ինչպէս Հայաստանում, նոյնպէս եւ արտասահմանում անսահման խանգաւառութիւն եւ ոգեւորութիւն ստեղծեց այս որոշումը։ Արտասահմանի մեր քոյրերն ու եղբայրները ժողովրդական միութիւններում, մամուլում եւ հրապարակային ելոյթներում յայտնեցին իրենց գոհունակութիւնը եւ Հայրենիք վերագառնալու փափաքը։ Արձանագրութեանց սկսելու հրահանգը աւելի հրահրեց նրանց խանգաւառութիւնը։ Ստացուած լուրերից խմանում ենք որ բաղմանազար հայեր շտապում են արձանագրութեան պիւրոններում։ Առաջին հերթում Յունաստանից արձանագրուել են 8000 հայեր, Թէհրանից՝ 17, 000, Հարաւային Ամերիկայից՝ 32,000, Սուրիայից եւ Լիբանանից՝ 50, 000, Թաւրիզի հայութեան հարիւրին 98 դիմել է եւ փափաք յայտնել անշտապ Հայաստան վերագառնալու։ Ամէն տեղ նոյն ցանկութիւնն է յայտնուում։ Ռումանիայից, Պուլկարիայից, Նոյնիթի Թուրքիայից ուր հայերը ապրում են զրկանքի եւ հալածանքի ուժիմի տակ եւ զրկուել են իրենց կամքը յայտնելու տարրական ազատութիւնից։

Ներգաղթի հարցը չափազանց լուրջ է եւ անհրաժեշտ աշարջօրէն մօտենալ խնդրին։ Մենք արտասահմանում ունենք մօտ մէկ միլիոն ազգակիցներ աշխարհի ծագերուն տարազնուած։ Բոլորն էլ ցանկանում են Հայրենիք վերագառնալու։ Ներկայ պայմաններում, մենք չենք կարող գոհացում առ բոլորին։ Հակառակ մեր գիւղատնտեսութեան եւ արգիւնա-

1262



ԳՐ. ԹԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ընթացում հակառակորդ վերելքին մեր սահմաններէն ներս, առաւելագոյնը 6000 հազար ազգակիցներ կրնանք ընդունել: Ի՞նչ պէտք է անել մնացողներին, Մերձեւք միւս ցանկացողներին: ԱՄԵՆԵՆԻՒՆ. ՄԵՆՔ ՉԵՆՔ ՈՒՋՈՒՄ ԷՒ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՄԵՐԺԵՆԷՆՍԱՍԷՄԱՆԷՐ ՄԵՐ ՔՈՅՐԵՐԻ ԵՒ ԵՂԵՆՅՐԵՐԻ ՓԱՓԱՔԸ. (Ծափահարութիւն): Մեր մարզերի աննախընթաց վերելքն անգամ չի բաւարարում ընդունել բոլորին: Հետեւաբար մեզ կը մնայ բարոյական կորովի ուժով Թուրքիայից պահանջել խլուած հայկական հողակամուներ որպէսզի հնարաւորութիւն տրուի արտասահմանի մեր բոլոր ազգակիցներին Հայրենիք վերադառնալ եւ ապրել իրենց հայրենի հողին վրայ:

(Երկարատեւ ծափահարութիւններ եւ բացազանչութիւններ):

Ժողովրդական այս զանգուածային եւ միահամուռ կամքին առաջ ի՞նչ դիրք է բռնել Թուրքիան եւ ի՞նչ է գրում Թուրք մամուլը: Նրանք ուզում են շեղեցնել համրային կարծիքը եւ սուտ փաստերով, նրանք առաջ են քշում կարսի եւ Արտահանի հարցը եւ Ռուսական ծաւալապաշտութեան երեւակայածին ազգական դիտաւորութիւն մը: Թուրք մամուլը ճգնում է պատմական փաստերը թաղցնել եւ իրականութիւնը ներկայացնել տարբեր երանգների տակ: Հայկական հողերի պահանջը, եւ արտասահմանի հայութեան վերադարձի արդար փափաքը Հայաստանի եւ արտասահմանի բուն ժողովուրդին բխած պահանջ է եւ հարց է: Եւրոպայից, Միջաւոր Արեւելքից, Ամերիկայից եւ Նոյնիսկ Թուրքիայից, Հայտ թիւնը ներկայացնում է զայն որպէս ազգային ցանկութիւն եւ պատմական իրաւունք: Արդարացի է այս խնդիրը եւ կենսական ամբողջ ժողովրդի նեղացող զարգացման տեսակէտից: Ո՛չ մէկ ազգական իմաստ, ո՛չ մէկ առեւտրական դիտաւորութիւն կայ: Որպէս իսկական բարեկամներ, Ռուսերը վաւերացրել են մեր պահանջը արդարացի գտնելով նրան:

Անցեալ եւ ներկայ Հայրենական պատերազմում հայութիւնը խիզախօրէն, հաւատարմարար կռուեց արդարութեան եւ հասարակաց դատի յաղթանակին համար: Հայաստանի անվիճելի մարտիկները մասնակցեցին եւրոպայի բազմաթիւ երկիրների ազատագրութեան մեծ գործին: Համաշխարհային զոհողութիւնից մեղի ինկած ծանր քնոք վերցրել ենք, հետեւաբար իրաւունք ունինք պահանջելու մեր պատմական իրաւունքները: Թուրք մամուլի պատճառաբանութիւնները բոլորովին անհիմն են եւ չբացատրելու են մոլորեցնել հանրային կարծիքն ու թաղցնել պահանջը իսկական իմաստը: Կարսի եւ Արտահանի նկատմամբ, Թուրք պետական չրջանակներու այն փաստը թէ այդ շրջանները Թուրքիոյ միացած են ժողովրդի կամքով, ծիծաղելի է բացարձակապէս: Այսպէս է զեկուցել Սա-



րաճողու՝ թրքական մամուլի ներկայացուցիչների առաջ: Բոլորովին տարբեր է իրականութիւնը:

... Պրեսթ-Լիթսլսքի դաշնագրի չորրորդ յօդուածին տրամադրութեան համաձայն, Ռուսիա և Թուրքիա յանձնառու կը լինէին քաշել իրենց զօրքերը եւ ճանչնալ թրքահայերի ազատութեան իրաւունքը հետեւեալ կէտերի մէջ. —

1. Թրքահայաստանից հեռացնել իրենց զօրքերին և ստեղծել հայերից ժողովրդական միւլիցիա:

2. Ապահովել հայ գաղթականների անարգել վերահարձը Թրքահայաստան:

3. Թուրքիոյ կողմից բռնի տեղահանուած բոլոր հայերի անարգել վերադարձը եւ տեղաւորումը Թրքահայաստան:

Սովետական Ռուսաստանը միշտ հաւատարիմ իր սպորադրութիւններին, Կարսի եւ Արտասանի շրջաններից քաշեց իր զօրքերին: Իսկ թուրքերը օգտուեցին այս առիթէն, բռնագրաւեցին այդ հողերը, կողոպտեցին, թալանեցին, խռչնդոտ հանդիսացան Հայաստան վերադարձողներին, ֆիզիկական բնաջնջումի ենթարկեցին հայերին եւ հուրի ու սուրի մատնեցին հայի անուան հետ կապուած ամէն ինչ: Ահա թէ ինչո՞ւ այսօր հայ չկայ այդ շրջաններում:

Թուրք պետութիւնը եւ մամուլը փորձում են թաղցնել այս ճշմարտութիւններին: Մեզ յայտնի է որ այդ շրջանում, վերոյիշեալ զոյգ գաւառներում կար 400,000 բնակիչ ճնշող մեծամասնութեամբ Հայ: Կոտուրածից, արտաքսուածից, հալածանքից յետոյ թուրք բռնակալների կողմից, մենք զարմանալի չենք գտնում որ այժմ հոն ունէ հայ չկայ: (Զայրոյթի, բողոքի բացագանչութիւններ):

Այս անարդարութիւնների եւ բռնարարութիւնների հանդէպ, 1918-ի վերջաւորութեան Սովետական Կառավարութիւնը Թուրքիոյ յայտնել է թէ՛ չէ ընդունում այդ շրջաններում կատարուած դէպքերին և համակերպել այդ շրջաններում կատարուած դէպքերին եւ ախրող կացութեան: Հետեւաբար նոյն տարուայ Հոկտեմբեր 11-ին Մոսկուան յայտարարել է գաշնագրի լիակատար խախտումը:

Պատմական իրադարձութիւնների առաջ, հայութեան պահանջքը արդարացի պահանջք է: Հայ ժողովուրդը արիարար մարտնչիւ է ֆաշիստների եւ բռնակալների դէմ յանուն արդարութեան, ազատութեան եւ իրաւունքների պաշտպանութեան: Նրա պահանջքը արդար է: Օրինակ՝ պահանջ է որ Թուրքիոյ կողմից վճարուած եւ աւխարհի չորս ծագեում տարողու արհասանմանի հայուրիւնը վերադառնայ Հայքեմիք եւ սիրանայ իր պատմական բոլոր իրաւունքներին:





Պէտք է աւելցնել նաև, թէ լեզուական և կրօնական ազգականք, ինչպէս նաև միասնաբար մղուած պայքար մը՝ իրենց ազգային անկախութեան ի խնդիր, կը մօտեցնեն եգիպտացի և սուսանցի ժողովուրդները:

Այս պատճառներով, Եգիպտոսի մէջ շատ զօրաւոր չարժեւ մը կայ ի նպաստ՝ Եգիպտոսի հետ՝ Սուսանի ալ բրիտանական զօրքերէ պարպուածին: Դալով բրիտանական զօրքերու մեկնումէն ետք Սուսանի կառավարման հարցին, երկու գլխաւոր հոսանքներ ի յայտ կու գան եգիպտական կարծիքներուն մէջ. մին կ'ուզէ «Միութիւնը՝ Նեղոսի Հովիտին», այսինքն Սուսանի կառավարումը Եգիպտոսի կողմէ. միւսը ի նպաստ է Եգիպտոսի և Սուսանի «Միացում»ին՝ այսինքն սուսանական ինքնավար կառավարութեան մը, հասարակաց շահու հարցերուն մասին երկու երկիրներուն միջև սերտ համագործակցութեամբ:

Տեսնական պահանջները. — Ամենէն լուսամիտ եգիպտացի ազգայնականները իրենց քաղաքական պահանջներուն կը միացնեն պահանջներ՝ որոնք սահմանուած են իրենց երկիրը ամբողջովին ձերբագրաւելու արտասահմանի անտեսական գերիշխանութենէն, իրենց երկրին տպահովելու տնտեսական յառաջդիմութիւն մը՝ որուն արգելք եղած է Եգիպտոսի գաղթային վիճակը, և մանաւանդ երկիրը օտակու ազգային հզօր ճարտարարուեստով մը: Այդ տնտեսական պահանջները կ'ամփոփուին այսպէս.

1. — Եգիպտոսի համար ազատութիւն՝ առևտուր ընելու ո՛րեւէ երկրի հետ, ներածելու և արտածելու ո՛րեւէ արտադրութիւն, ըստ երկրին պէտքերուն: Ներկայիս, այդ ազատութիւնը սահմանափակուած է բազմաթիւ սեղմուեցումով (գրամափոխութեան հակողութիւն, ներածումի և արտածումի արտօնագիր): Եգիպտացիները կ'ուզեն, մասնաւորաբար, որ ազատօրէն կարենան ներածել այն մեքենաները՝ որոնք անհրաժեշտ են ազգային զօրաւոր ճարտարարուեստ մը կառուցանելու համար:

2. — Վճարումը Եգիպտոսի Սթերլինգի պահանջներուն, ըստ Եգիպտոսի չահերուն, այսինքն՝ մեքենաներու ձեռն առկ կամ օտար դրամանիշերով որոնք իրեն թոյլ պիտի տային ապրանք գնել սթերլինի պլոքէն դուրս գտնուող երկրներէն (Միացեալ Նահանգներ, Զուիցերիա, Շուէտ, Իսանատա, Լայն), կամ ոսկիի ձեռն առկ, որ պիտի ծառայէր երաշխաւորելու եգիպտական դրամատոմսերու հրապարակումը և այսպիսով Եգիպտոսի թոյլ պիտի տար անկախ դրամ մը ունենալ:

3. — Այլքայնացումը մենաշնորհի կարագիր ունեցող օտար ձեռնարկներու (Զրանցքի ընկերութիւն, քարիւղի ընկերութիւններ, Տէլթայի երկաթուղիի ընկերութիւն, Լայն): Եգիպտոսի Ազգային Դրամատան ազգանշուէրը՝ իրեն դրամատոմս հրապարակող դրամատուն, նոյնպէս կը պահանջուի եգիպտացի ազգայնականներուն կողմէ:

4. — Եգիպտոսի մէջ գործածումի ձգտող օտար դրամադուլաներուն վրայ հակողութիւն, որպէսզի անոնք զետեղուին ճարտարարուեստի մէջ և այսպէսով նպաստեն եգիպտական անկախ տնտեսութեան զարգացումին:

## ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՐԵՐ՝ ԵԳԻՊՏԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿՈՂԷԻՆ

Այս վճռական օրերուն, ուր եգիպտացի ժողովուրդին լաւագոյն դատակներուն արիւնը, ուսանողներ և զործաւորներ, կը հոսի աղատութեան և անկախութեան համար, եգիպտացիներուն հայեցողութիւնները բնականաբար կը դառնան երկրին մէջ քնակող եւրոպացիներուն:

«Մեզի հետ էք, և կամ՝ դէմ: Եթէ չէզոքութեան դիրք մը բռնէք, այդպէսով դուք կը հաստատէք այն պատրուակը, որմէ կ'ուզուի մասամբ մը արդարացնել մեր անկախութեան յապաւումը. այսինքն՝ մոլեռանդութեան սպառնացումը եւրոպացիները պաշտպանելու կարեւորութիւնը. այն ժամանակ դուք մեր դէմ գործիքներ կը դառնաք: Իսկ եթէ մեր կողքին էք, այն ատեն համարձակ բողոքեցէք, յատկօրէն ցոյց տուէք ձեր համերաշխութիւնը մեր ազգային պայքարին հետ»:

Եգիպտոսի զանազան եւրոպացի գաղութներուն զեմակրատական կազմակերպութիւններն ու թերթիքը պատասխանեցին այս կոչին և ցուցաբերեցին իրենց համերաշխութիւնը եգիպտացի ժողովուրդին հետ: Մենք ևս կը բարձրացնենք մեր ձայնը՝ հռչակելու համար, որ սրտով ու մաքով զօրավիզ կ'ըլլանք եգիպտացի ժողովուրդին պայքարին՝ աղատութեան, անկախութեան և զեմակրատայի համար...

... որովհետեւ մենք ամբողջ սրտով կը սիրենք այս աշխատաւոր և ապնջական ժողովուրդը, որ այնքան աղետակաւնութեամբ ընդունեց զմեզ, մեր պատմութեան ամենավճռական պահերուն և որ նուիրական պարտականութիւն մը կը նկատենք՝ եզրայրարար օգնելու այս դժուարին ժամանակներուն:

... որովհետեւ, մեր գաղութին մեծամասնութիւնը, զործաւորներ, արհեստաւորներ, մտաւորականներ, չունի որեւէ մէկ շահ և յայտնապէս կը մերժէ ըլլալ օտարին գործիքը՝ ընդդէմ եգիպտացի ժողովուրդին:

... որովհետեւ, մենք այլ, սարկութեան դարերու ընթացքին զբրկուած ըլլալով աղատութենէ, դիտենք թէ ազգային անկախութեան պահանջը խիստ նուիրական է, և կը համակրինք այն բոլոր ժողովուրդներուն, որոնք կը պայքարին և կը զոհարեալին այդ իրաւունքին ստացման համար:


... որովհետեւ, մեր հայրենիքին, Սովիէթական Հայաստանի մէջ իրագործուած յառաջդիմութիւնները 25 տարին երես ընթացքին, մեզ աւելի ևս կապեցին աղատութեան, եզրայրութեան և ազգային անկախութեան զեմակրատական սկզբունքներուն, առանց որոնց՝ ժողովուրդներուն համար կարելի պիտի չըլլար երջանիկ և խաղաղ ապրիլ:

ԿԵՅՅԷ՝ ԱՆԿԱՆ ԵՒ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՐԸ:



# Ի՞ՆՉՊԷՍ Կ'ԸՆՏՐՈՒԻ

## ՍՈՎԻԵԹ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ



Գրեց՝ ՊԵՆԻՔՈՎ

Օրէ որ նոր թափ կը ստանան Սովիէթական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան Գերագոյն Խորհուրդի ընտրութեանց համար տարուած նախագատրաստական աշխատանքները՝ Միլիոնաւոր սովիէթ քաղաքացիներ կը մասնակցին այս աշխատանքներուն։ Նախ և առաջ հրատարակուեցան ընտրական օրէնքը և ընտրական շրջաններու ցանկը։

Սովիէթ Միութեան մէջ ընտրութիւնները տեղի կ'ունենան ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկութեամբ։ Սովիէթ Միութեան մէջ 18 տարեկանը անց բոլոր քաղաքացիները՝ առանց սեռի, ցեղի, ազգութեան, կրօնքի, կրթութեան աատիճանի, բնակավայրի, ընկերային ծառայութի, նիւթական վիճակի և անցեալ գործունէութեան նկատու մեքերով զուէարկուել իրաւունք ունին։ Այս իրաւունքէն զրկուած են միայն այն սնձերը, որոնք յիմարութիւնը հաստատուած է և կամ արգարադատութեան կողմէ դատապարտուած են։

Սովիէթական Սոցիալիստական Հանրապետութեան իշխանութեան Գերագոյն Մարմինը կը բաղկանայ երկու Խորհրդարաններէ։— Միութեան Սովիէթը և Ազգութեանց Սովիէթը։

Առաջին Խորհրդարանին երեսփոխաններուն ընտրութիւնները կը կատարուին իւրաքանչիւրը 300 հազար բնակիչէ բաղկացած ընտրական շրջաններով։ Այս ձևով կը հաստատուի բոլոր սովիէթ քաղաքացիներուն իրաւունքներու հաւասարութեան սկզբունքը։

Սովիէթ Միութիւնը բաղմութիւ և բաղմազան ազգերէ բաղկացած պետութիւն մըն է։ Ահա թէ ինչո՞ւ Միութեան Սովիէթին կից՝ որ առանց ազգութեանց խտրութեան կը ներկայացնէ Սովիէթ Միութեան բոլոր աշխատողներուն ընդհանուր շահերը— կազմուած է հաւասար իրաւունքներով ուրիշ Խորհրդարան մը, որ կը ներկայացնէ Սովիէթ Միութեան իւրաքանչիւր ժողովուրդի մասնաւոր շահերը ներկայացնող Ազգութեանց Սովիէթը, շահեր որոնք կապուած են ազգային մասնաշաղկապութեանց։ Հոս ալ յարգուած է իրաւունքներու հաւասարութեան սկզբունքը— հաւասարութիւն գաշնակցային և ինքնավար հանրապետութեանց, և ինքնավար շրջաններու և գօտիներու։

Ազգութեանց Սովիէթին մէջ գաշնակցային հանրապետութիւնները կ'ունենան 25, ինքնավար հանրապետութիւնները 11, ինքնավար շրջանները 5 և ազգային գօտիներն ալ 1 երեսփոխան։ Այս ձևով Ռուսիոյ Դաշ-

նակցային Սովիեթական Սոցիալիստական հսկայ հանրապետութիւնը, իր աւելի քան հարիւր միլիոն բնակիչներով և էսթոնիոյ Սովիեթական Սոցիալիստական փոքրիկ Հանրապետութիւնը, որ մէկ միլիոնէ աւելի բնակչութիւն չունի, հաւասար թիւով, այսինքն իւրաքանչիւրը 25 երեսփոխաններ կը զրկեն Ազգութեանց Սովիեթին:

Արգէն ըսինք թէ Սովիեթ Միութեան մէջ քուէարկութիւնը ընդհանուր է, հաւասար և ուղղակի: Ասիկա կը նշանակէ թէ բոլոր քաղաքացիները ուղ-



քացիները ուղղակիօրէն իրենք իսկ կ'ընտրեն իրենց երեսփոխանները: Դիւրացնելու համար որ իւրաքանչիւրը ընտրող օգտուի քուէարկելու իրաւունքէն, ընտրական շրջանները բաժնուած են հաստատուններու, որոնց իւրաքանչիւրին քուէարկուներու թիւը պէտք չէ 3000-ը անցնի: Ահա թէ

ինչո՞ւ երեսփոխաններու թիւին համաձայն Սովիեթ Միութեան մէջ ստեղծուած 1287 ընտրական շրջաններուն կողքին, հաստատուած են աւելի քան 160,000 ընտրական հաստատուններ: Ահաւասիկ հաս է որտեղի կ'ունենան քուէարկութիւնները: Հաստատուններու կեդրոնավայրերուն մէջ քուէարկութեանց գրասենեակներ կը հաստատուին, գաղտնի քուէարկութեան համար առանձնացուած խցիկներով: Քուէարկութեանց օրը, քովի սենեակը կը զետեղուին կնքամոմով կնքուած քուէատուփերը, ու ընտրողները պիտի գնեն իրենց քուէարկութիւնը:

Աշխուրջ ուշադրութիւն կ'ընծայուի որպէսզի բոլոր քաղաքացիները օգտուին իրենց քուէարկելու իրաւունքէն: Առայդ, կը կատարուի անդեկատուութեան և բարոյականութի հսկայ աշխատանք մը, որուն կը մասնակցին միլիոնաւոր անձեր: Մասնաւոր ուշադրութիւն կ'ընծայուի ընտրական ցանկերու պատրաստութեան, զորմ մը որ կ'իյնայ Սովիեթներու Գործադիր կոմիտէներուն: Հաստատուններու ընտրական Զանձնաժողովները անդամները, հազարաւոր քաղաքացիներու օգնութեամբ մանրազնիւ



Յեռագիմական ցենզաւոր բրօքական մը մղուեցաւ Հայաստանի դէմ, իր խորհրդայնացման առաջին օրերէն սկսեալ: Սակայն, յետին նպասակէ մղուած այդ սուս անբասանիչներն իսկ այսօր իրենք զիրենք ընկնուած կը զգան սեռեկով Հայաստանի փառահեղ իրազոյժումները, սեռեսական ու մշակութային բոլոր մարզերուն մէջ:



կերպով կը ստուգեն ընտրական ցանկերու ճշդութիւնը: Բուէարկութեանէն շատ առաջ, ընտրողը հնարաւորութիւն ունի իր հատուածի ընտրական Յանձնաժողովին մօտ ստուգել թէ իր անունը յիշուած է ցանկին վրայ կամ ոչ:

Բուէարկութեան օրը գրասենեակ ներկայացող ընտրողները, պիտի ընդունուին Ընտրական Յանձնաժողովին կողմէ:

Այս վերջինը ընտրական ցանկին վրայ պիտի փնտռէ քուէարկողին անունը, անոր քուէաթուղթ մը պիտի յանձնէ և պիտի նշանակէ ցանկին վրայ: Այդ քուէարկողը առանձնաբանը պիտի մանէ և պիտի լեցնէ քուէաթուղթը՝ և զայն դնէ քուէատուփը:

Սովիէթ Միութեան ընտրական քննիչներ, ինչպէս նաև նոյնինքն ընտրութիւնները ազգին ամենէն խիստ հակակշիռին տակ կը գտնուին: Չեռարկութեանց, կոլխոզներու, գրասենեակներու, բարձրագոյն դպրոցներու, զինուորական միաւորներու, ինչպէս նաև աշխատաւորական ընկերակցութեանց ժողովներու մէջ, ինչպէս Կոմսոնիստական և Սնտիֆայական կադմոկերպութիւններ, Կարմիր խաչ, և այլն: աշխատաւորները իրենց թեկնածուները կ'առաջարկեն չրջաններու և հատուածներու ընտրական Յանձնաժողովներուն համար: Ապա ընտրական Յանձնաժողովներու անդամացութեան այս թեկնածուները կը հաստատուին Սովիէթներու Գործադիր Կոմիտէներուն կողմէ: Անոնց թիւը մէկ միլիոնէն պակաս չէ: Հատուածներու ընտրական Յանձնաժողովները պաշտօն ունին քուէատուփերը բանալ և արդիւնքը ներկայացնել ընտրական չրջանի յանձնաժողովին:

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ԲԱՅԹԱՆՈՎ

Սովիեթական վարչաձևի ամենէն հրեւելի իրազօրժումներէն մին է՝ Սթալինեան Սահմանադրութիւնով նուիրազօրժուած այն անջնջելի բարեկամութիւնը, որ կը միացնէ Սովիեթական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան բոլոր ժողովուրդները:

Իր գոյութեան առաջին օրերէն իսկ, սովիեթական կառավարութիւնը «Ռուսիոյ ժողովուրդներու իրաւունքներու յայտարարութիւն»-ին մէջ հռչակեց ազգային քաղաքականութեան հիմնական սկզբունքները:— Հաւասարութիւն եւ գերիշխանութիւն Ռուսիոյ բոլոր ժողովուրդներուն:

Ազաւ կարգաբանութեան իրաւունք, մեզն ըլլալով Ս. Ս. Ռ. Մ.-են ազատօրէն դուրս ելլելու իրաւունքը՝ անկախ պետութիւն մը կազմելու համար:

Ազգութեան կամ կրօնի եւ միեւնոյն բնոյթի բոլոր սահմանումներու վրայ հիմնուած բոլոր տաճանաւորհումներու ջնջում:

Ազաւ յառաջդիմութեան իրաւունք՝ Ռուսիա բնակող բոլոր ազգային փոքրամասնութիւններու եւ վաչկատուն խումբերու համար:

Սովիեթներու իշխանութիւնը ամբողջովին բնաջնջեց ժողովուրդներու կեղեքումը եւ անհաւասարութիւնը, որոնք կը տիրէին Ռուսիոյ մէջ՝ նախ քան Յեղափոխութիւնը:

Քաղաքացիական պատերազմէն եւ ռաբար միջամտութենէն ետք, երբ երկիրը վերջապէս կրցաւ անցնիլ խաղաղ աշխատանքի, հարցը ներկայացաւ աւելի սեղմ միութեան մը ստեղծման շուրջ՝ սովիեթական զանազան հանրապետութիւններուն միջեւ: Արդարեւ, 1922-ի վերջը, սովիեթական բոլոր հանրապետութիւններու Սովիեթներու առաջին ժողովը պատմական որոշում մը կ'առնէր, որ կը քուէարկէր կամաւոր միութիւնը սովիեթական ժողովուրդներու: Սովիեթական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան ծոցին մէջ:

Զարական կառավարութիւնը տախլութեան սղին կը տարածէր Ռուսիոյ ժողովուրդներու միջեւ: Ետադրիմականները փոքրամասնութիւններու զարդեր կը կազմակերպէին: Անդրիովկասի մէջ, Զարին զինուորները Զարդել կու տային Հայերը՝ Ատրպէյջանցիներէն, Վրացիներէն կամ այլ ազգերէ: Սովիեթներու իշխանութիւնը վերջ գրաւ տախլութեան այս բոլոր ցոյցերուն: Այսօր, հաստատ բարեկամութիւն մը կը կապէ սովիեթ-



թական բուր ժողովուրդները՝ Ս. Ս. Հ. Մ. բազմազգային Պետություններն է, որ կը համախմբէ աւելի քան 170 ազգութիւններ ու ցեղեր։

Հոկտեմբերեան Յեղափոխութեան յաջորդող առաջին ամիսներուն, Ռուսոյ ժողովուրդները կատարեցին քաղաքական կարեւոր նուաճումներ, կազմակերպելով Սովիէթական Միութիւնը, անոնք զօրացուցին իրենց քարեկամութիւնն ու համագործակցութիւնը, միեւնոյն Պետութեան ծոցին մէջ։ Հարկ էր նաև լերջ դնել որոշ ժողովուրդներու անասական և մշակութային յետամնաց վիճակին՝ փութացնելով անոնց ճարտարարուեստական զարգացումը։ Ահաւասիկ թէ ինչո՞ւ սթալինեան հնգամակները այնքան կարեւոր տեղ մը գրաւեցին հարեան հանրապետութիւններու անասական և մշակութային յառաջդիմութեան մէջ։ Այս նպատակին զօրծնականացման համար մեծամեծ դրամագլուխներ յատկացուեցան։ Հետեւել մի քանի վիճակագրական թիւերը զաղափար մը կու տան այդ փոխակերպութեան արագութեան մասին։ 1913-ի բազդատմամբ, Ս. Ս. Հ. Միութեան մեծ ճարտարարուեստի արտադրութիւնը ցոյց կու տայ՝ 1940-ին, 10.9 անգամ աճում մը, մինչդեռ միևնոյն չրջանին՝ 22.2 անգամ՝ Բազաքիստանի համար, 22.3 անգամ՝ Հայաստանի համար, 26.4 անգամ՝ Վրաստանի համար, 160 անգամ՝ Բրքիզիստանի և 242 անգամ՝ Տաճիքիստանի համար։ Այնպէս որ, անցեալի յետամնաց այդ երկիրները այսօր ունին յառաջագէմ ճարտարարուեստ մը։

Միև կողմէ, արմատական փոփոխութիւններ տեղի ունեցած են այս հանրապետութիւններու երկրագործութեան մէջ։ Շնորհիւ անասութեան հաւաքականացման և երկրագործութեան մեքենականացման, գիւղացիները, որոնք վարերու ընթացքին թշուառութեան մէջ կորսուած էին, ապրեցան վերջնապէս գիւրականցիկ ու հեշտին կեանք մը։

Յեղափոխութենէն առաջ, Արեւելքի ժողովուրդներուն գրեթէ ամբողջութիւնը անգրագէտ էր։ Թուրքմէնիստանի մէջ, օրինակի համար, բնակչութեան մէկ հարիւրերորդը միայն կարդալ և գրել գիտէր։ Ներկայիս, շնորհիւ ընդհանուր և պարտաւորիչ դաստիարակութեան, հազուագիւտ է նոն անգրագէտ անձի մը հանդիպիլ։

Հոկտեմբերեան Յեղափոխութենէն առաջ, Բրքիզիստանը ձարակաշտութեան ամենայնատմաց գազու թնրէն մին էր։ Բնակչութեան հազիւ երկու առ հարիւր համեմատութիւնը կարդալ և գրել գիտէր։ Ներկայիս, Բրքիզիստանի մէջ կան 1500 վարժարաններ, ուր յաճախող աշակերտուէթեան թիւը կը հասնի 328.000-ի։

Մեծ թիւով վարժարաններ, բարձրագոյն ուսմանց հաստատութիւններ, գիտական հետազոտութեան կաճառներ, գրադարաններ, թատրոններ, արահներ, սինէմաներ և մշակութային ու դաստիարակչական այլ ուսումնարաններ ստեղծուած են Միութեան բոլոր հանրապետութիւններուն մէջ։ 1914-ին, 73,000 աշակերտ կը հաշուուէր Ատրպէյջանի վարժարաններուն մէջ, իսկ 1941-ին՝ 654,000։ Դաստիարակութեան հաստատութիւններու և աշակերտներու թիւի միևնոյն զարգացումը արձանագրուած է նաև միև

հանրապետութիւններուն մէջ: Հետեւեալ մի քանի թիւերը գաղտնիար մը կու տան բարձրագոյն վարժարաններու իրաւործած յառաջդիմութիւններուն մասին. 1914-1915 դպրոցական տարեկըջանի ընթացքին, Ռուսիոյ պատկանող հողամասերուն վրայ միայն մէկ բարձրագոյն վարժարան կար: 1910-1911-ին, այդ միեւնոյն հողամասերուն վրայ 146 բարձրագոյն վարժարաններ գոյութիւն ունէին, որոնցմէ 45-ը Անդրկովկասի հանրապետութիւններուն մէջ, 47-ը կեդրոնական Ասիոյ հանրապետութիւններուն մէջ և 20-ը Քաղաքիստանի Ս. Ս. Հանրապետութեան մէջ:

Ծնորդիւ Սովիէթներու իշխանութեան, շնորհիւ ռուս մեծ ժողովուրդի եղբայրական աջակցութեան, Ս. Ս. Հ. Միութեան բաղմամբիւ ազգութիւնները ոչ միայն դարմանեցին տնտեսական և մշակութային իրենց յապաղած վիճակը, այլ և լծուած են մտաւորական ծաղկման ընդարձակ ու բարգաւաճ կեանքի մը:

Ջարականութեան չրջանին, Ուղղէքիստանի մէջ միայն մէկ գիտական հետազոտութեան հաստատութիւն կար: Ներկայիս, Ուղղէքիստանի Ս. Ս. Հանրապետութիւնը ունի գիտութիւններու Ակադեմիա մը, 19 գիտա-հետազոտական կաճառներ, 23 գիտա-հետազոտական կայաններ, 3 գիտարաններ և 11 թանգարաններ: 1944-ին Հայաստանի գիտութիւններու Ակադեմիային մէջ կ'աշխատէին 187 հայ գիտնականներ, իսկ Ատրպէյջանի գիտութիւններու Ակադեմիային մէջ՝ աւելի քան 100 ատրպէյջանցի գիտնականներ: Բոլոր հանրապետութիւնները արձանագրած են ճարտարա-ուեստական և երկրագործական արտադրութեան տարաստվոր աճում մը, ազգային մշակոյթի յորորինակ ծաղկում մը: Բոլոր ժողովուրդները ստացած են իրենց լիակատար հւստատրութիւնն ու ազատագրումը:

Ս. Ս. Հ. Միութեան Սահմանադրութեան 123րդ յօդուածը կը նուիրործէ այս չքեղ իրագործումները՝ հռչակելով.

Ս. Ս. Հ. Միութեան ֆաղաֆաղներու իրաւունքներու հաւաստութիւնը — առանց ազգութեան եւ ցեղի խտրութեան — անճախաղստիի օրէնք մըն է սնտակաւ, համրային, մշակութային ընկերային եւ ֆաղաֆաղ կեանքի բոլոր մարգերու մէջ:

Փաղաֆաղներու իրաւունքներու ուղղակի կամ անուղղակի ամեն սեղմում, կամ բնդհակառակը, ամեն առանձնաւորութիւն — բոս իրենց պատկանած ցեղին եւ ազգութեան —, նոյնպէս նաեւ՝ արտաքին, աշխուրթեան, ցեղային ու ազգային անարգանքի ամեն բրօքական, օրէնքով պատժելի է:

Սովիէթական բազմազգային Պետութեան ժողովուրդները կը կազմեն միացած ընտանիք մը, այս բառին ամենաանգամ ու ճշգրիտ իմաստով: Անոնք այս միացումը յայտնաբերեցին նախապատերազմեան հոյակապ աշխատանքներու հասարակաց իրագործումներով: Այս Միութիւնը մասնաւոր զօրութեամբ մը ի յայտ եկաւ նաեւ հիթլերական յափշտակողներու դէմ մղուած պատերազմի դաշինք վրայ: Իրենց անպատկառ մեծամտութենէն մղուած, հիթլերականները ուղեցին բնաջնջել Ս. Ս. Հ. Միութեան:



Թեան ժողովուրդներու անյեղլի միութիւնը: Անոնք ամէն միջոցով օգնացին պառակտել զանոնք՝ աւելի դիւրութեամբ նուաճել եւ տիրել կարենալու համար: Սակայն սովիէթական ժողովուրդներու բարեկամութեան ու եղբայրութեան զաղափարագիտութիւնը բնաւ օգտակար չեղաւ հիթլերականներուն:

Դերման յափշտակողներուն և ճարտն կայսերականներուն դէմ ազգային մեծ պատերազմը խիստ փորձ մը եղաւ, սակայն ան վճռականօրէն ապացուցանեց սովիէթական վարչաձևի հաստատութիւնն ու անդրդուելիութիւնը: Միախորհուրդ, Սովիէթական Միութեան ժողովուրդները, ռուս ժողովուրդին գլխաւորութեամբ, ցոյց տուին իրենց անձնուրացութեան և հերոսութեան հազուագիւտ ոգին: Ռուսեր և Ուքրաինացիներ, Պիէլզուսներ և Վրացիներ, Քաղաքներ և Հայեր, Էսթոնիացիներ և Ուզպէճներ և Խորհրդային Միութեան միւս այնքան բազմաթիւ ժողովուրդները պայքարեցան թշնամիին դէմ:

Ժողովուրդներու բարեկամութիւնը կարմիր Բանակին ներշնչեց նորօրինակ ուժ մը: «Մեր երկրի ժողովուրդներու բարեկամութիւնը, ինչպէս ըսաւ սպարապետ Սթալին, յաղթահարեց պատերազմի բոլոր դժուարութիւններն ու փորձանքները: Ասիկա է այն աղբիւրը, ուրկէ Սովիէթական Պետութիւնը կը ստանայ իր ուժերը»:

Ռուսիոյ, Պիէլզուսիոյ, Ուքրաինայի, Պալթեան երկիրներու արժամապէս զբաւուած հողամասերուն վրայ կազմուած պարտիզաններու ջոկատները անուրանալի օգնութիւն մը բերին կարմիր Բանակին: Այս ջոկատները կը բաղկանային բոլոր ազգութիւններու մարզոցով:

Համաշխարհային երկրորդ պատերազմը վերջացաւ Միացեալ Ազգերու կատարեալ յաղթանակով՝ դերման և ճարտն յափշտակողներու ուժերուն վրայ: Ս. Ս. Հ. Միութեան ժողովուրդները վճռական դեր մը խաղացին այս յաղթանակին մէջ: Անմիջապէս որ թշնամութիւնները դադարեցան, Խորհրդային Միութեան ժողովուրդները լծուեցան վերայինութեան աշխատանքին:

Սովիէթական կառավարութիւնը երկրին տնտեսական զարգացման համար նոր նշգումայ ծրագիր մը պատրաստեց: Այս շրջանի ընթացքին, երկիրը պիտի դարձանէ ոչ միայն այն վերքերը, զորս իրեն պատահուեցին հիթլերականները, այլև պիտի իրագործէ տնտեսական և մշակութային նոր յառաջդիմութիւններ: Ազգային հանրապետութիւններու յառաջդիմութիւնը մեծ տեղ մը պիտի դրուէ այս ծրագրին մէջ:

Ազգային Մեծ Պատերազմի ընթացքին թափելով իրենց արիւնը, Սովիէթական Միութեան ժողովուրդները ամրապնդեցին իրենց բարեկամութիւնը: Այսօր, անոնք միասնաբար կը կատարեն իրենց ստեղծագործ ճիգը, որ Սովիէթներու երկիրը կ'առաջնորդէ դէպի յաջողութիւններու, փառքի ու զօրութեան նոր գագաթի մը:

Թարգմանեց՝ Յ. ՄԷՔԷՐԵԱՆ

## ՆԿԱՐՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵՆԷՆ



Այս երեք լիբուանցի երիտասարդուհիները զծագրութիւն կ'ուսանին  
հիւսուածելենի եւ կիրամիկայի (ceramique) վրայ,  
Ռիկայի Ազգային Վարժարանի մէջ:

«ԲՕՊԻԷՏԻԱ» (Յաղաքանակ) կոչ-  
ուած ինքնաշարժի նոր օրինակը,  
արտադրուած՝ «Մոլորով» գոր-  
ծարանի կողմէ, Կորիի մէջ:





# ՆԵՐԳԱՂԹԸ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Գրեց՝ ՊԵՊՈ ԶԱՆ

Ամէն կողմէ լուրերը կը շարունակեն հասնիլ, ուրախութեամբ լեցնելով մեր սրտերը. երազը իրականութիւն մը կը դառնայ, ներգաղթը՝ դէպի մեր փռապատնէ սովիէթական հայրենիքը սկսելու վրայ է:

Բայտը հայ գաղութներուն մէջ, աննախընթաց ոգեւորութեան դէպքեր կը պարզուին արձանագրութեան գրասենեակներուն առջեւ: Հայրենիքին կողմ խոր արձագանգ մը գտաւ Եւրոպայի, Միջին Արեւելքի և Ամերիկայի հայ գաղութներու զանգուածներուն մէջ:

Իսկ Եգիպտոսը՝ Մեր գաղութը ո՞րքան ոգեւորուեցաւ ըզրդատաբար միւս երկիրներու մեր եղբայրներուն:

Արգարեւ, նշանակելի տարբերութիւն մը կայ մեր գաղութին և Սուրիոյ, Յունաստանի կամ Ֆրանսայի գաղութներուն միջեւ: Եգիպտոսի հայ գաղութը ճանչցուած է իր բարեկեցիկ դիրքով: Ֆրանսայի հայ գաղութը, զոր օրինակ, շատ աւելի մօտ է Ֆրանսացի ժողովուրդին քան Եգիպտոսի հայ գաղութը՝ եգիպտացի ժողովուրդին: Եգիպտոսի հայը, երկրին եւրոպացի միւս գաղութներուն հետ, կը վայելէ դասակարգային դիւրակեցիկ դիրք մը, անդունդ մը կը բաժնէ մեզ ֆէլլաշներու և եգիպտացի գործաւորներու զանգուածէն: Եւ ի վերջոյ անժխտելի է որ ֆէլլաշին, եգիպտացի գործաւորին աշխատանքին վրայ հաստատուած է Եգիպտոսի եւրոպացի գաղութներուն առանձնաշնորհալ դիրքը:

Եգիպտոսի մեր գաղութին մասնայատուկ այս առանձնաշնորհալ դիրքը զօրաւոր կերպով կ'ազդէ իր ընդհանուր մտայնութեան ու զգացումներուն վրայ, և պատճառ կ'ըլլայ որ ներգաղթի նկատմամբ իր դիրքը որոշ չափով տարբերի միւս գաղութներու դիրքէն:

Այս դիտողութիւնը ընդհանուր առմամբ ճիշդ ըլլալով մեր գաղութին, պէտք է գտնորոշուի մը ընել բնակչութեան տարբեր խւերուն միջեւ: Դժբախտաբար, — և ասիկա մեղադրանք մըն է ազգային իշխանութեանց հանդէպ, — կորելի չէ ունենալ վիճակագրութիւններ, որոնք մեզի ծանօթացնեն թէ մեր գաղութի 35,000 հայերուն մէջ ո՞րքան գործաւորներ, արհեստաւորներ, պաշտօնեաներ, վաճառականներ, ճարտարաբուհատագործներ և այլ դասակարգային հաստեմաններ կան: Ասոնք վիճակագրութիւններ են, զորս մեր «Զոջերը» պիտի չսիրեն ընել. սակայն մեզի համար շատ օգտակար պիտի ըլլային՝ աւելի ճշգրտօրէն ճանչնալու համար մեր գաղութին բնկերային կառուցուածքը:

Սակայն, մենք գիտենք, որ Եգիպտոսի բոլոր գաղութներէն՝ հայ գաղութը այն է, որ կը ներկայացնէ գործաւորներու և փոքր արհեստաւոր-

ներու ամենամեծ համեմատութիւնը Ահաւասիկ այս դասակարգերուն, ինչպէս նաև երիտասարդներու և մտաւորականներու շարքերուն մէջ է, որ կը հանդիպինք մեծ խանդավառութեան մը՝ ներգաղթի նկատմամբ։ Անտարակոյս, նոյնիսկ մեր զաղութին այս ամենէն առողջ դասակարգերուն մէջ, խանդավառութիւնը մասամբ չափաւորուած է առանձնաշնորհեալ խաւի մտայնութեամբ, որուն քիչ առաջ անդրադարձաւք, ինչպէս նաև՝ յետադիմականներու նենգաւոր բրօքսկանտով, որ տարիներ շարունակ մշուհցաւ Խորհրդային Հայաստանի դէմ։

Ինչ որ ալ ըլլայ՝ այս խաւերէն է որ հայերը զանգուածով պիտի ներկայանան ներգաղթի համար արձանագրութեան գրասենեակները։ Հայաստան հասնելէ վերջ, շնորհիւ ընկերային շրջանակին և հաւաքական խանդավառութեան, այդ հայրենակիցները չափ չափով պիտի կրնանցեն առանձնաշնորհեալ խաւի մտայնութեան ամէն հետք։

Քանի բարձրանանք ընկերային կարգին մէջ, այնքան կը շեշտուի յետադիմական տրամադրութ մտայնութիւնը՝ հասնելով միաքելը օմիոյջութեամբ խեղութիւնիւր և ապականելու աստիճանին։ Արդարև, գաղութին մէկ մեծ մասը կազմուած է վաճառականներէ, ճարտարարուեստագործներէ, ելիմագործներէ, կարծ խօսքով՝ անձնաւորութիւններէ, որոնք հարուստ գիրք մը շինած են։ Պատերազմը փութացուց այս ընթացքը, աւելի ևս այդ գիրքը բարելաւելու առիթը ընծայելով։ Բնական և հասկնալի է որ դժուար ըլլայ այդ անձերուն համար մէկ օրէն միւսը թողուլ առանձնաշնորհեալ գիրք մը, երթալ հաստատուելու համար երկրի մը մէջ, ուր քաղաքացիներու ընկերային գիրքը չէ հիմնուած առանձնաշնորհումներու վրայ։ Ոչ ոք պիտի մտածէր զանոնք մեղադրել՝ եգիպտոս մնալուն համար։ Հայրենասիրութիւնը մարդոց չի պարտադրուիր։ Եւ մենք պիտի շնորհաւորենք այն բացառիկ հայրենասէրները, որոնք կը պատրաստուին զոցել իրենց ծաղկեալ հաստատութիւնները՝ ներգաղթի ճամբան բռնելու համար։

Սոկայն բան մը կայ որուն դէմ պէտք է մեր բոլոր ուժերով ծանրանալք, առիկա՝ այն ծոյկամիտ ու նենգաւոր բրօքսկանտն է (մշուած՝ բնակչութեան այս դիւրակցիկ դասակարգին կողմէ և տարածուած իրենց ազդեցութեան ներքեւ գտնուող հլու տարրերուն և կազմակերպութիւններուն կողմէ) որուն նպատակն է վհատեցնել ներգաղթի ստեղծուած ժողովրդային խանդավառութիւնը։ Հին հակաստիլիթ խօսքերը վերսկզբած են դարձեալ. ձանրմ, ինչ պիտի երբաւ րնես հոն, համալուրիւն պիտի րնես, հո՛ղը պիտի փոխես, հիւղակներու մե՛ջ պիտի բնակիս... Հիւս ուրիշները րոյ երբան, վերջը կրեսեսնեմ... եւլն։ Այս մարդիկը իրենց գիրքին մասին ա՛յնքան մտահոգուած են որ խորհելով թէ դէպի սովիէթական հայրենիք իրենց հայրենակիցներուն ներգաղթը կրնայ վնասել իրենց ունեցած գիրքին՝ եւրոպացի կամ եգիպտացի հարուստ դասակարգերուն մօտ, անոնք գործօն բրօքսկանտ մը կը մզնն համոզուելու համար օտարները թէ ճշգիծ մաս մը միայն (ամի քանի ծայրայեղ տարրերն) պիտի փափաքի



ներգաղթել, Բացարձակապէս պէտք է, որ հանրային կարծիքը դիմական գերծէ այս վնասակար յետադիմական շարժումները:

Վերջապէս, մեր գաղութին մէջ կայ մաս մը, որ եզրիպտոս հաստատուած է ոչ թէ քառորդ դարէ ի վեր, ինչպէս մեծամասնութիւնը, այլ բազմաթիւ սերունդներէ է վեր, և որ գրեթէ ձուլուած է եզրիպտոսի ժողովուրդին՝ լեզուով, մտայնութեամբ և բարքերով: Անոնց համար, որոնք աւելի եզրիպտացիներ են քան հայեր, անշուշտ հարց չկայ այս երկիրը թողելու: Մաղթենք իրենց պարզապէս, որ ըլլան եզրիպտացի լուրջաքաջներ և օգտակար՝ այնքան զժրախտ և այնքան հիւրընկալ այս ժողովուրդին:

Եզրափակելով, պիտի ըսենք ուրեմն, որ մեր գաղութին ժողովրդային մտաւորական դասակարգերէն կարեւոր մաս մը պատրաստ է սովորեթական հայերէնիք վերադառնալու: Թէ ի՞նչ համեմատութեամբ՝ անկարելի է նախապէս ճշդել: Սակայն, տրւած ըլլալով առանձնաշնորհալ խաւի դիրքը, զոր հայ գաղութը կը վայելէ՝ եզրիպտոսի և արապացի միւս գաղութներուն հետ միասին, որոշ է որ ներգաղթողներու համեմատութիւնը նուազ մեծ պիտի ըլլայ քան միւս երկիրներուն մէջ: Գալով անոնց, որոնք եզրիպտոս պիտի մնան, անոնցմէ մէկ բան միայն կը պահանջուի՝ որ օգնեն իրենց հայրենակիցներուն ներգաղթին, կամ գէթ՝ լիւեն:

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

(Հարցումները տեսնել էջ 22)

- 1.— Մանուկ Սայիս:
- 2.— Հայկական Ժողկոմսովետի կից արհասանմանից ճեղագրող հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէի նախագահի տեղակալ քննուած է:
- 3.— Անկախութեան քուական:
- 4.— Տոք. Էնրիկին:
- 5.— Մեծն Բիւսանիոյ առաջին դեսպանը եզրիպտոսի մէջ (1883-1906):
- 6.— Օսլո:
- 7.— Արձակագէն (պարսիզանագէտ) եւ հերոս հայ մը Ֆրանսական պիմադրութեան մէջ, որ նացիներէն սպաննուեցաւ:
- 8.— Անաստաս Միկոյեան:
- 9.— Հայաստանի Կոմունիստ (Բ.) Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի Քարտուղար:
- 10.— Մարաշախոս Թիքո եւ Բրոքետտոր Ժոլիո Քիւրի:
- 11.— Երեւ տնտեսաւորութիւններէ՝ Յովսէփ Օրբելի՝ նախագահ, իսկ Վ. Համբարձումեան եւ Վ. Գուլբանեան՝ փոխ նախագահներ:

ԿԼԿ  
1209

# ՍԱՐԱՃՈՂԼՈՒ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԶԱՐԱՓՈՒՄԷ

## ՀԱՅՈՅ ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆԲՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ, ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐԸ

Գրեց՝ Բրոն. ԽՂՈՍԹՈՎ

Նոր ժամանակներ երկչարթաթերթին մէջ Բյօթ. Խօսքով կը գրէ. Թուրքիոյ վարչապետ Սարաճօղլու՝ Յունուարի սկիզբը թուրք յուրացողներու համադումարին մէջ ճառ մը խօսեցաւ Կարսի, Արտասանի եւ Կարգ մը ուրիշ շրջաններու վրայ Թուրքիոյ ունեցած իրաւունքներուն մասին: Ինչպէս յայտնի է, արտասանմանի հայ հանրային կարծիքը չընդունիր թէ Թուրքիոյ իրաւունքներ ունի այս հողերուն վրայ: Անշուշտ Պ. Սարաճօղլու համաձայն չէ այս բանին, ինչ որ ըսաւ արդէն թուրք յուրացողներու համադումարին խօսած ճառին մէջ:

Սարաճօղլուի ճառը հետաքրքրեց մեզ քանի որ խիստ յատկանշանական երեւոյթ մըն է: Միջազգային օրէնքի տարեգրութեանց մէջ միշտ հիմա չէ պատահած որ, շրջանի մը բնակչութեան զանգուածային ջարդը մէջսեղ բերուի որպէս փաստարկութիւն, արդարացնելու համար ջարդարարներուն՝ ջարդուածներուն հողերուն տէր դառնալու իրաւունքը:

Բացորոշ է թէ Պ. Սարաճօղլու անհամբեր է նոր դարաշրջան մը բանալու միջազգային օրէնքին մէջ, երբ կը փորձէ այդ հողերուն վրայ Թուրքիոյ ունեցած իրաւունքը հիմնաւորել այն փաստարկութեամբ թէ հոն բնակող մեկ հայ իսկ չկայ: Կարելի է հարց տալ Պ. Սարաճօղլուին. Ինչո՞ւ արդեօք ոչ իսկ մեկ հայ կայ այնտեղ: 1916-ին Կարսի շրջանը միայն 100 հազար հայեր կը բնակէին: Ո՞վ է յանցաւոր, որ անոքը հոն չեն հիմա: Համաձայն Պ. Սարաճօղլուի ըմբռնումին, քաղաքագրութեան և օրէնքին, կը բուէ որ մէկը ջարդէ ազգ մը, իրաւունք ունենալու համար անոր հողերուն վրայ. եւ աւելին, իրաւունք ունենալու զայրանալու, երբ այդ ազգէն վերապրողներ և արտասանման գտնուողներ, համարձակութիւն ունենան ըսելու թէ իրենց կը պատկանի այդ հողը: Աւելի համեստ էր արեւելիակ Սուլթան Համիտը. Շփոթութեան կը մատնուէր ան և ոչ թէ կը զայրանար, երբ իրեն կը յիշեցուէին հայերու ջարդերը:

Սարաճօղլու ջարդերէ զատ ուրիշ փաստարկութիւններով ալ կ'արդարացնէ Թուրքիոյ իրաւունքը Կարսի և Արտասանի վրայ: Ան կը յիշեցնէ թէ 1918-ին հանրաքուէ մը տեղի ունեցաւ այդ շրջանին մէջ եւ 85.125 անձեր քուէարկեցին Թուրքիոյ հետ միանալու, 1924 զէմ քուէարկեցին, մինչ 1843 անձեր ձեռնպահ մնացին:

Եւ սակայն 500 հազարնոց բնակչութիւն մը կար Թուրքիոյ՝ Ռուսիայէն առած հողերուն վրայ: (Ասիկա կը պարունակէ Կարսը եւ այն մասերը Երևանի կառավարութեան և Պաթումի շրջանին, որոնք Թուրքիոյ ձեռքը մնացին):



Որոշ է թէ Ռուսիայէն խլուած շրջաններու կէս միինն բնակչութեան ջնջին փոքրամասնութիւնը միայն մասնակցեցաւ հանրաքուէին: Միւս բընակիչները կամ փախան թուրքերէն, — ոմանք հեռանալով ուսուս զօրքերուն հետ, — ուրիշներ լեռները քաշուեցան: Իսկ մեծ մասը յաջողած չըլլալով փախչիլ, փարդուեցաւ թուրքերու կողմէ:

Ինչ որ աւելին է, թուրքերու կողմէ հանրաքուէի մը կազմակերպումը հակառակեակն էր և բռնաբարութեամբ ծովահէններու վտայի՝ Պրէսթ-Լիթովսքի դաշնագրին, որ պարտադրուեցաւ Սովետ Միութեան: Այդ դաշնագրին հրդ յօդուածին շրջ հասուածը կ'ըսէ.

Ռուս զօրքերը առանց յապաղումի պիտի պահպեն Արսահանի, Կարսի եւ Պարսի մարզները եւս, Ռուսիա պիտի չմիջամէ այս մարզներու ազգային եւ միջազգային յարաբերութեանց կազմակերպումին, ալ սոյն մարզներու բնակիչներուն պիտի բողոք գլուխ հանել այս վերակազմութիւնը, դրացի երկիրներուն եւ ի մասնաւորի թուրքիոյ հետ համաձայնաբար:

Ակներկա է թէ այս յօդուածը թուրքիոյ իրաւունքը չէր տար հանրաքուէ ստրբելու: Յօդուածը կը նախատեսէր թէ հանրաքուէն պիտի կազմակերպուէր՝ այս շրջաններու բնակիչներուն կողմէ, որոնք ապա իրենց որոշման համար պիտի ապահովէին ոչ միայն թուրքիոյ, այլեւ զրացի պետութիւններու համաձայնութիւնը: Այս բանը չկատարուեցաւ: Պրէսթ-Լիթովսքի դաշնագրի այս բանաբարութեամբ արձանագրուեցաւ Ռուսիոյ Սովետական Սոցիալիստական Դաշնակցային Հանրապետութեան Արտաքին Դործոց Կոմիտարի 1918 Սեպտեմբեր 20 յուշագրին մէջ: Սոյն յուշագրով Սովետ Կառավարութիւնը կը յայտարարէր թէ ազգերին է այս հանրաքուէն:

Յուշագրիւ կ'ըսէր.

«Պրէսթ-Լիթովսքի դաշնագրին հրդ յօդուածը նախապէս ուսուական հանրապետութեան պատկանող՝ Կարսի, Արտահանի եւ Պարսի մարզ բնակիչներուն իրաւունքը կու տար վերակազմակերպուելու, համաձայնաբար դրացի երկիրներու հետ եւ ի մասնաւորի թուրքիոյ:

«Այս շրջաններուն ու անոնց միջազգային գոյամիճակը պիտի վճռուէր անոնց բնակիչներուն կամքին արտայայտութեամբ: Եւ սակայն հագիւ թէ կեղծուած էր դաշնագիրը, այս շրջանները գրաւուեցան թուրք զինեալ ուժերու կողմէ և դրուեցան զինուորական գրաւման ռէմիսի տակ, յարակից վայրագութեաններով և թալանով՝ ընդդէմ սիլիլ բնակչութեան: Թուրքական իշխանութեան հաստատման հետ, միաժամանակ տեղի ունեցաւ բանի զինուորագրութիւնը 19 տարիքը անց բոլոր տարեբու:

«Բնակիչները, որոնց կամքին ազատ արտայայտութեամբ պիտի վերակազմուէին այս շրջանները, ահարեկչութեան ենթարկուեցան և զբոսեցան այնպիսի պայմաններու տակ, որոնք անհամ ծաղրի մը վերածեցին այս շրջանի բնակիչներուն տրուած իրաւունքները: Գուէարկութեանց նախօրեակին, անուանի քաղաքացիներ, որոնց ազգեցութիւնը կրնար աննպաստ ըլլալ թուրքիոյ համար, տարագրուեցան և ձերբակալ-

ուեցան և շատ մը պարագաներու ալ գնդակահարուեցան: Գոչարկութիւնը տեղի ունեցաւ հակակշիռն տակ թուրք իշխանութեանց, որոնք առիթէն օգտուելով վրէժ լուծելու համար ընտրեցին իրենց զոհերը և ձեռք զարկին ծրագրուած վայրագութեանց: Այսպիսի պայմաններու տակ որոշ բան մըն էր թէ ինչ արդիւնք պիտի ունենային քուչարկութիւնները:

«Սովետ կառավարութիւնը Ռուսիայէն խլուած չրջաններու ընակիչներուն վրայ ի գործ դրուած բռնութիւնը խոշոր աւստատու մը կը ներկայացէր Դաշնագրին հրդ յօդուածին, և այսու կը յայտարարէ թէ՝ չի կրնար համաձայն ըլլալ կարսի, Արտահանի և Պաթումի չրջաններու բնակիչներու կամքին, այսպէս ասած արտայայտութեան հետ, և կը նկատէ թէ չէ գործադրուած այս չրջանները վերակազմակերպելու անոնց իրաւունքը»:

Պրէսթ-Լիթովսքի Դաշնագրին այս և ուրիշ բռնաբարութիւնները թուրքին կողմէ՝ պարտագրեցին Սովետ կառավարութիւնը որ յայտարարէ նոյն յուշագրով թէ «Թուրք կառավարութեան այս արարքները գործնապէս կը ջնջեն Դաշնագիրը»:

Թուրքիոյ մեղ հարկադրեց որ հրամարինք այս չրջաններէն, օգտուելով այդ ժամանակները Սովետ Ռուսիոյ տկար ըլլալէն և սակայն այս հողերուն թուրքիոյ ձեռքը գտնուիլը բռնագրաւուած մըն է: Ոչինչ կը փաստեն «հանրաքուէ»ի մասին եղած խօսքերը:

Պէտք է նշել թէ անցեալին թուրքիոյ՝ իր հայ հպատակներուն վրայ գերիշխանութիւնը բազմաթիւ անգամներ խնդրոյ առարկայ եղած է, ներկատի ունենալով ակնբախօթէն ողբալի կացութիւնը թուրքիոյ հայերուն: Օրինակի համար, 1878-ին, այս գերիշխանութիւնը սահմանափակուեցաւ Պերլինի վեհաժողովին կողմէ: Պերլինի Դաշնագիրը թուրքիոյ հայերը կը դնէր վեհաժողովին մասնակցող տէրութեանց միջազգային պաշտպանութեան տակ: Դաշնագրին ճկող յօդուածին համաձայն «Բարձրագոյն Դուռը յանձն կ'առնէր առանց նոր յապաղումներու, իրագործել հայերու կողմէ բնակուած չրջաններու բնակչութեան պահանջած բարեփոխութիւններն ու բարեկարգութիւնները և երաշխաւորել անոնց պահովութիւնը ընդդէմ Չէքքէզներու և Բիւրստերու: Բարձրագոյն Դուռը իր ըրած միջոցառումներուն մասին պարբերաբար պիտի զեկուցէ տէրութեանց, որոնք պիտի հակն սոյն միջոցառումներու գործադրութեան»:

1895-ին, թուրքիոյ ի գործ դրած ջարդերէն ետք Բրիտանական կառավարութիւնը Պերլինի Դաշնագրին սոյն յօդուածին հիման վրայ, առաջարկեց որ միջազգային միջամտութիւն մը ըլլայ պաշտպանելու համար բազմաշարժար հայերը:

1919-ի Բարեղի խաղաղութեան ժողովին մասնակցողներն ալ կասկածներ ունէին հայկական հողերու վրայ թուրքիոյ գերիշխանութեան իրաւունքին օրինականութեան մասին: Այդ կասկածները ունէր ի մասնաւորի Նախագահ Ուիլսոնը:

1918 Յունուար 5-ին ըրած յայտարարութեամբ, Լոյս ձորձ եւս այն



կարծիքը յայտնեց թէ՛ Թրքահայաստան իրաւունքն ունէր պահանջելու որ ճանչցուէին իր «ազգային անջատ պայմանները»:

Ինչպէս յայտնի է, Սեւրի 1920-ի դաշնագրի հեղինակները կը նախատեսէին ո՛չ միայն թուրք գերիշխանութեան սահմանափակումը Պերլինի դաշնագրի հիման վրայ, այլև թուրքիայէն ամբողջովին բաժնուիլը հայերէ բնակուած շրջաններու: 89րդ յօդուածին համաձայն թուրքիոյ և Հայաստանի սահմաններու ճշգրտմը յանձնուեցաւ Միտցեալ նահանգներու նախագահ Ուիլսոնի իրաւախոնութեան, այն առաջադրու թեամբ թէ՛ այդ սահմանները պէտք էր անցնէին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Պիթլիսի վիլայեթներէն և թէ Հայաստան պէտք է ծովի վրայ ելք ունենար:

Ինչպէս ի յայտ կու գայ, միայն հայ ազգի անդամները չէ որ կոսկածի տակ դրած են թուրքիոյ բարոյական և օրինական իրաւունքը հայերէ «մաքրում» հայկական շրջաններու վրայ...

Պ. Սարաճողուն կ'ըսէ թէ պատմութեան մասին ազէտ են Թրիյիսիի երկու գիւնակաւները, որոնք պահանջեցին Վրաստանի վերադարձը թուրքիոյ կողմէ բռնագրաւուած Վրացական շրջաններու: Փոռճ յորձակում մըն է ասիկա: Ոչ թէ անոնք այլ Պ. Սարաճողուն է որ ազէտ է այս պիտանի գիտութեան մասին:

«ԱՌԱՒՈՅ»

## ՍՓԻԻՌՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆԸ

Տուն դառնալու լուր ունեմ ձեզ, իմ եղբայրներ հայրենաբաղձ,  
Մեր հնաւուրց կաղնուց փոկուած դուք սերունդներ դեռ ցանուցիւր,  
Որ քափառում էք դարեդար ձեր սրտաւում սրտում պահած  
Պատկերն հայոց հայրենիքի, որպէս ժրագ մի լուսածիր:

Դիտեմ հեռուում, օտար երկրի ոչ մի արեւ ձեզ չմպաց  
Եւ հողն օտար, ձեր կարօթի, ձեր սրտուրեան լացով է քաց,  
Թողէք հեռու աշխարհներին որբութիւնը անտուն մայրու,  
Ելէք խոնջած իմ անցուններ, հայրենի սան դոճներն են քաց:

Եկեք ծաղկուն օրհանը ձեր, որ կեանք առել մոխիրներեից  
Որ դալարում է երփնալառ, որպէս չինաղ եղեմ այդի,  
Ուր հնչում է սրտադարար հայկալեզու երգն անբախիժ,  
Եւ ուր տերն են եւ ինքնիշխան կտրին բոռները մեր Հայկի:

Եկե՛ք, սիրով կանչում են ձեզ մեր պապական արճն ու արօր,  
Կանչում են ձեզ մեր սարերի անուշ հովերն մեղմօրօր,  
Մեր աղբիւրները լուսաւոր, մեր օճախները հուրհրան  
Եւ մանուկները գալարուն, որպէս գարնան արօյսն ու լուր:

Մեծ մեծագործ Առաջնորդի ձեռքն է կանչում ձեզ հայրաբաւ,  
Առաջնորդի, որ մեզ տուեց ե՛ւ հայրենիք, ե՛ւ ինքնութիւն  
Ձեզ էլ կը տայ նա տե՛ն օճախ, կը տայ ոգի սեղծարար,  
Եկե՛ք, չննաղ մեր աշխարհի Առաջնորդն է ձեզ կանչում տուն:

Սովետական Հայաստան

Ա.Դ.ԱՒԵՒ

ԳԱՍ Դիմնարար Գիտ. Գրադ.




FL0573375

# ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

## ԱԹՈՒ - ԳՐԱՍԵՂԱՆ ՄԸ ՈՐ ԴԻՎԱԻ ԿԱՐԵԼԻ Է ՇԻՆԵԼ

Ամեն աշակերտ, որ նոր վարժարան կը յանախէ, հանդիպում է փափափի ունենալ իր անձնական արտօք, գրասեղանը եւ պահարանը, ուր կ'աշխատէ իր գրավարժութիւնները կատարել եւ այդ աշխատանքներուն հարկ եղած առարկաները գեղեցիկ:

Ինչպէս վերելի նկարին մէջ կը տեսնուի, երախան արտօքններէն զտնուող դարակներուն մէջ կը դասաւորէ իր գունաւոր մատիւները, տետրակները եւ ընթերցանութեան առարկան գիտքերը: Իսկ իր աշ կողմը կը գտնուի շարժուն գրասեղան մը, որուն վրայ կը կատարէ զձագրութեան եւ գիրի իր առարկան փորձերը, որոնք շատ անգամ օգտակար եւ անվնասակար զբաղումներ են իրեն համար, քան ուրիշ որեւէ խաղ:



Գրասեղանը արտօքնին հաստատուած է ծխիկով եւ ունի յեմարան մը, որ դարձնուած ծխիկով միացած է իրեն: Արտօք ունի մասնաւոր տեղ մը, ուր կը կարգէ գրասեղանին յեմարանը: Երախան երբ ուզէ կ'ընայ դիւրութեամբ ծալել յեմարանը, եւ գրասեղանը ինքնաբերաբար դէպի վար կ'իջնէ:

Երկրորդ պակեթին մէջ մանրամասն եւ շատ պարզ կերպով

գծուած է գրասեղանի իր դիրքին մէջ, ինչպէս նաեւ ծալուած վիճակին մէջ: Իսկ ամբողջական վիճակին մէջ ցոյց տուող զձագրութիւնը արդէն բացայայտէ կը պակեթեացնէ ԱԹՈՒ - ԳՐԱՍԵՂԱՆԻ բոլոր մասերը:

«Popular Science»

Քաղեց՝ Յ. ՅԷՆՐԻԿՆԵՆԵԱՆ